



աւետիսը տարածեցին: Մարդիկ զարմացան:

Քիչ ետք, արեւելեան երկիրներէ երեք իմաստուններ երկնքին մէջ պայծառ աստղ մը տեսան եւ որոշեցին հետեւիլ աստղին: Անոնք պատահաբար անցան Յրեաստան: Այն ժամանակ Յրեաստանի թագաւորը Յերովդէս թագաւորն էր: Յերովդէս ժողովի հրաւիրեց իմաստունները, իմանալու Յիսուսի մասին եւ ցանկաց, որ երեք իմաստունները տեղեկութիւններ փոխանցեն անոր մասին: Անոնք կրկին հետեւեցան փայլուն աստղին: Աստղը հագիւ ախոռին վրայ հասաւ, յանկարծ անհետացաւ: Անոնք ախոռ մտնելով տեսան Յիսուս մանուկը խանձարուրի մէջ պառկած, խոնարհեցան մանուկին առջեւ եւ նուիրեցին իրենց հետ բերած ոսկի եւ թանկարժէք նուէրներ:

Այդ գիշեր, երբ բոլորը քնացած էին, իմաստուններէն մէկը երագ տեսաւ: Ան լսեց ձայն մը, որ կ'ըսէր թէ Յերովդէս թագաւորին մօտ պէտք չէ վերադառնալ: Յաջորդ օրը անոնք այլ ճանապարհով վերադարձան տուն: Յերովդէս թագաւորը խաբած էր իմաստունները, ըսելով թէ ցանկութիւն ունի Յիսուս մանուկը տեսնել եւ երկրպագել զինք: Ան մտահոգ էր, մտածելով որ Յիսուս մանուկ կրնայ փոխարինել զինք: Յերովդէս չէր հասկնար, որ Յիսուս Զրիստոս Աստուծոյ որդին էր եւ երկնքի ու երկրի թագաւորը: Յերովդէս մինչ կը սպասէր երեք իմաստուններուն, որոշեց իր զինուորները ուղարկել Բեթլեհեմ եւ հրամայեց սպանել երկու տարեկանէն վար բոլոր արու մանուկները:

Մինչ այդ, Բեթլեհեմի մէջ Յայր Յովսէփ երագ տեսաւ. ան երագին մէջ լսեց ձայն մը, որ զինք կը յորդորէր փախչիլ Եգիպտոս: Յաջորդ առաւօտ իսկ Յովսէփ, Մարիամն ու Յիսուս մանուկը առնելով ուղղուեցաւ Եգիպտոս, ուր անոնք պաշտպանուած պիտի ըլլային Յերովդէս թագաւորէն: Անոնք ապրեցան Եգիպտոս մինչեւ Յերովդէսի մահը, ետքը վերադարձան Նազարէթ քաղաք:

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ


2000 տարի առաջ, օր մը Գաբրիէլ հրեշտակը յայտնուեցաւ Մարիամ անունով երիտասարդ կնոջ մը եւ ըսաւ, որ ան շուտով պիտի յղանայ ու ծնունդ տայ Փրկիչին, որ փրկէ ժողովուրդը իր մեղքերէն: Մարիամ եւ իր ապագայ ամուսինը՝ Յովսէփ, կ'ապրէին Նազարէթ քաղաքին մէջ: Անոնք մեկնեցան Բեթլեհեմ քաղաք՝ արձանագրուելու մարդահամարի, զոր թելադրուած էր Հռոմէական Կայսրութեան կողմէ: Նազարէթէն Բեթլեհեմ ճամբան քանի մը օր տեւեց:

Երբ Յովսէփն ու Մարիամը հասան Բեթլեհեմ, Յովսէփ կեցութեան տեղ փնտռեց, բայց բոլոր իջեւանները լեցուն էին: Անոնք ի վերջոյ գիշերեցին ախոռի մը մէջ, ուր կենդանիներ կային: Այդ գիշեր Յիսուս մանուկը ծնաւ: Այնտեղ ո՛չ անկողին կար, ոչ ալ օրօրոց, ուստի Յիսուս մանուկ քնացաւ մսուրին մէջ:

Այդ գիշեր հովիւներ Բեթլեհեմի մօտ գտնուող դաշտը կը գտնուէին, ուր կը հսկէին իրենց ոչխարներու հօտերուն: Յանկարծ անոնց յայտնուեցաւ հրեշտակ մը եւ աւետեց, որ Փրկիչը ծնաւ: Հովիւները շտապեցին Բեթլեհեմ եւ գտան Յիսուսը մսուրին մէջ, այնպէս ինչպէս հրեշտակը ըսած էր: Յիսուսին տեսնելէ ետք, անոնք



ԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՆ՝ ՄԱՐԻՄԻՒ ԱՎՈՍԵՍԻՆ-ՇԱՀԱՆԻՆ, ՆԱԿԱՐԱՍՈՐՆԵՆ՝ ՈՒՅՅՈՒ ԲԵՐՈՇԵՆՆ



Հետևեալ թիւերը միացո՛ւր, ապա ներկե՛ կազմուած պատկերը:

Նոր Տարուան Այբուբենը

Հետևեալ Այբուբենի տառերով, ըստ կարելիութեան կազմե՛ Նոր Տարուան եւ Ս. Մուկղի վերաբերեալ բառեր:

- | | | | | |
|---------|---------|---------|---------|---------|
| Ա _____ | Թ _____ | Ձ _____ | Չ _____ | Յ _____ |
| Բ _____ | Ժ _____ | Ղ _____ | Պ _____ | Ի _____ |
| Գ _____ | Ի _____ | Ճ _____ | Ջ _____ | Փ _____ |
| Դ _____ | Լ _____ | Ս _____ | Ռ _____ | Ք _____ |
| Ե _____ | Ն _____ | Յ _____ | Ս _____ | Օ _____ |
| Զ _____ | Օ _____ | Ն _____ | Վ _____ | Ֆ _____ |
| Է _____ | Վ _____ | Շ _____ | Տ _____ | |
| Ը _____ | Հ _____ | Ո _____ | Ր _____ | |



Իրաքանչիւր տառով կազմե՛ սինակին համապատասխան բառեր:						
	Ա	Մ	Ա	Ն	Ո	Ր
Նոր տարուան երգեր						
Նոր տարուան ուտելիքներ						
Նոր տարուան մաղթանքներ						

$$\begin{aligned}
 & \text{3 bells} = 36 \\
 & \text{1 gift} + \text{1 bell} + \text{1 gift} + \text{1 gift} = 33 \\
 & \text{1 tree} + \text{1 gift} + \text{1 gift} = 29 \\
 & \text{1 gift} + \text{1 tree} + \text{1 bell} = \square
 \end{aligned}$$

Փորձե՛ լուծել:

ՏԱՐՈՒԱՆ ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՄԻՍՆԵՐՈՒ ԱՆՈՒՆՆԵՐՈՒՆ ԻՄԱՍՏԸ

ՅՈՒՆՈՒԱՐ

Այս ամիսը կոչուած է լատինական Եանուս աստուծոյ անունով: Եանուսը եղած է սկիզբի եւ վերջի, մուտքի եւ ելքի աստուածը: Սկիզբը ան խորհրդանշած է լոյսի եւ արեւի աստուածը, ձեռքին բանալի մը, որով իբրեւ թէ երկնային դռները կը բանար եւ լոյս-ցերեկ կը դարձնէր: Հետագային անոր կը վերագրեն ուրիշ յատկութիւններ եւ այդ յատկութիւնները կը ներկայացուին երկու դէմքով, մէկը՝ տարեցի, իսկ միւսը՝ երիտասարդի: Առաջինը կը խորհրդանշէր անցեալը, իսկ երկրորդը՝ ապագան: Բ.Ա. 46 թուականին Հռոմի Յուլիոս Կեսար 1 Յունուարը տարուան սկիզբ կը հաստատէ:

ՓԵՏՐՈՒԱՐ

Այս ամսուան անունը կը կապեն Ֆեփրուարի կամ Լատինական Լուպերկալի՝ ոչխարի հօտի պահապան աստուծոյ անունին հետ: Այս պատճառով ալ Փետրուար ամսուն զոհեր կը մատուցէին այդ աստուծոյն: Ոմանք ալ կը կարծեն թէ, Փետրուար կը նշանակէ մաքրութիւն ու սրբութիւն:

ՄԱՐՏ

Այս ամսուան անունը յառաջացած է հռոմէական պատերազմի աստուած՝ Մարսի անունէն:

ԱՊՐԻԼ

Ապրիլ ամսուան անունն ծագումը լատիներէն «ապրիլե» բառէն կու գայ, որ կը նշանակէ՝ բացուիլ: Նախքան Յուլիոս Կեսարի կողմէ օրացոյցի բարեփոխումը, Ապրիլը եղած է տարուան երկրորդ ամիսը: Այս ամսուն կը բացուի ամբողջ բնութիւնը:

ՄԱՅԻՍ

Մայիս անունը կապուած է հին յունական Մայա աստուածուհիի՝ Հերմեսի մօր անունն հետ: Մայիս ամսուան կը կատարուէր տօնակատարութիւն, Մայա աստուածուհիին զոհեր մատուցանելով: Որոշ հետազօտողներու կարծիքով՝ Մայիս անունը կապուած է հռոմէական ծերակոյտի հետ, որ կը կոչուէր «մայոր», այսինքն՝ մեծ ժողով:

ՅՈՒՆԻՍ

Յունիս ամսուան անունը յառաջացած է հեթանոսական Յունուա (Հերա) աստուածուհիի (ըստ աւանդութեան, ան եղած է Չեւսի կինը՝ աստուածներու թագուհին) անունէն:

ՅՈՒԼԻՍ

Ամսուան անունը Յուլիս կոչուած է ի պատիւ Հռոմի Կայսրին՝ Յուլիոս Կեսարի: Մինչ այդ, ամիսը կը կոչուէր Քուինտիլիս, այսինքն՝ հինգերորդ:

ՕԳՈՍՏՈՍ

Օգոստոս ամիսը իր անունը ստացած է Հռոմի Օգոստոս Կայսեր անունէն: Նախքան այդ, ամիսը կը կոչուէր Սիքստիլիս, այսինքն՝ վեցերորդ (հռոմէական տոմարի սկիզբը Մարտի ամիսն էր):

ՍԵՊՏԵՄԲԵՐ

Սեպտեմբեր՝ բառացի կը նշանակէ եօթերորդ: Այս ամիսը իր ժամանակին կոչուած է Գերմանիկոս, Անտիոնիոս, Հելլոլիոս, Տակտիկոս: Սակայն անոնք բոլորն ալ որոշ ժամանակ անց գործածութենէ դադարած են:

ՀՈԿՏԵՄԲԵՐ


Ժամանակ մը, հռոմէացիները Հոկտեմբեր ամիսը կը ցանկային անուանել Ինկուիտոս՝ անյաղթահարելի, սակայն անիկա լայն տարածում չգտաւ եւ վերականգնեցաւ անոր նախկին անունը՝ Հոկտեմբեր, որ բառացի կը նշանակէ՝ ութերորդ:

ՆՈՅԵՄԲԵՐ

Նոյեմբեր կը նշանակէ՝ իններորդ: Ժամանակ մը հռոմէական ծերակոյտը որոշեց անիկա վերանուանել Տիբերիոս, ի պատիւ իրենց կայսրին, որ ծնած էր այդ ամսուն, սակայն այդ անուանումը տարածում չգտաւ:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

Հոմէացիները կարճ ժամանակամիջոցի մը համար այս ամիսը կոչած են «ամագոնիա», բայց ետքը վերականգնած է նախկին՝ Դեկտեմբեր անունը, որ բառացի կը նշանակէ՝ տասերորդ: (Հոմէական ամիսը կը սկսէր Մարտ ամիսէն, որով Դեկտեմբեր ամիսը կը դառնար տասերորդ):



ԱՐՋԸ

Ամբողջ ձմեռը արջը կ'անցընէ ննջելով անտառին մէջ գտնուող իր որջին մէջ, ծծելով թաթը: Հազիւ արեւը հալեցնէ ձիւնը, ան դուրս կու գայ իր ձմեռնաքունէն:

Ուտելիք փնտռելու ընթացքին ան կը տեսնէ ծառի մը խորշէն դուրս եկող մեղուներ: Մեղր համտեսելու ցանկութեամբ, ան կը մագլցի ծառը, գլուխն ու թաթերը կը մտցնէ խորշէն ներս: Սակայն մեղուները կը մերժեն գոհացնել արջը եւ զայն դուրս կը դնեն: Յաւեն տապալակելով արջը կ'իյնայ գետին, ապա վերականգնելով կը շարունակէ ուրիշ սննդեղէնի փնտռտուքը:

ԻՆՉՈ՞Ւ ԸՆՁՈՒՂՏԻՆ ՎԻՉԸ ԵՐԿԱՐ Է

Ընձուղտը իր երկար վիզին եւ երկար ոտքերուն շնորհիւ կրնայ թշնամին նշմարել շատ հեռուէն:

Դուք երբեմն կը տեսնէք, որ վայրի էշերու եւ ընձուղտներու խումբեր միասին կ'ապրին, որովհետեւ ընձուղտները երկար են եւ շուտ կը նկատեն թշնամին ու ահագանգ կու տան, որմէ կ'օգտուին եւ կը զգուշանան նաեւ վայրի էշերը:

Ընձուղտին երկար վիզը կ'օգնէ նաեւ ուտելու բարձր ծառերու տերեւները:

Անոնք արագավազ են: Երկար վիզ եւ երկար ոտքեր ունենալու հետեւանքով,

ը ն ձ ու ղ տ ն եր ու ն
համար ջուր խմելը
դժուար գործողութիւն
կը համարուի:

Ընձուղտին հասակը կը հասնի 6 մետրի: Երբ հալածուի, մեծ քայլեր կը վերցնէ, մօտ 50 քիլոմետր արագութեամբ:

Ընձուղտ որսալը չափազանց դժուար է:

